№ 39 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ 15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 39

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ **„ՇԱՒԻՂ“** ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց դրան: Արտասահմանում՝ 3 բուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 բուբլի կամ 4 ֆրանք:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում՝ ցանկացողները կարող են դրուիլ Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ապրէսեանցի մօտ, Արտաքիում՝ Յակոբ Էլչիբէկեանի մօտ, Նոր-Զուղալում՝ Յովսէփ Բարսէղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյնուեանի մօտ, Մարաղայում՝ Մելքոն Խալափեանցի մօտ, Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կիրակի որուայ ազգային ընդհանուր ժողովը.—ՆՅԻՒԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ազգային Ուսումնասիրաց ընդհանուր ժողովը. Թէհրանի հասարակութեան ընդհանուր ժողովը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր.—Յայտարարութիւններ:

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՑ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Անցեալ կիրակի օր կատարուած եղելութիւնը մի դարագլուխ է կազմելու Թէհրանի հայոց կրթական և առհասարակ ազգային և եկեղեցական գործերի մէջ: Առաջին անգամը լինելով՝ ժողովուրդը հրաւիրուեց գործադրել իւր անբռնաբարելի իրաւունքը, մասնակցելով իւր հաստատութեանց վարչութեանը, իւր ընտրած հոգաբարձուների ձեռքով: Այս ամենաբնական և ամենասովորական իրողութիւնը, ժողովրդի քաւէտութեան իրաւունքը, որ գործ է դրւում աշխարհի ամեն մի քաղաքում ուր երկու հայ կայ Տաճկաստան, Ռուսաստան, կամ այլուր, Թէհրանի մէջ չը կատարուեց առանց ահագին դժուարութեանց, տառանց 6—7 տարու մաքառման և երկպառակութեանց, և եթէ դա այսօր մի կատարուած իրողութիւն է, մենք այդ պարտական ենք յաջող հանգամանքների մի զուգադիպութեան:

Մենք մեզ պարտք ենք համարում մի քանի բառով բացատրելու թի ինչպէս է առաջ եկած իրերի այս վիճակը, որ բառնալու համար այնքան ջանք է հարկաւորուել:

1870 թուին Թէհրանում կազմւում էր մի ընկերութիւն „Ուսումնասիրաց անուամբ, որը բացարաւ առաջին քիչ թէ շատ կանոնաւոր դպրոցը այս քաղաքում: Սահմանափակուած լինելով հասարակութեան մի շատ փոքրաթիւ խմբի մէջ, առաւելն 20—25 հոգի. այդ ընկերութիւնը չէր կարող մեծ ազդեցութիւն ունենալ ժողովրդի զանազան խաւերի վերայ, որոնք այսպէս ընդ միշտ դուրս էին մնում գործունէութեան ասպարէզից: Մենք չենք կամենում քննադատել թէ ինչ շարժառիթներից դրդուած՝ այդպիսի նեղ, եզրափակուած մի շրջանի մէջ էր դրւում հասարակութեան մասնակցութիւնը իւր դպրոցական գործերում: Ով գիտէ գուցէ նպատակի յաջողութեան համար հարկաւոր էր սահմանափակել ժողովրդի մասնակցութիւնը առաջին տարիներում: Բայց դժբախտաբար այդ ուղղութիւնը տիրեց ոչ թէ միայն մի քանի տարի, այլ տևել է նոյն իսկ մինչև այսօր, և այն արդիւնքըն ունեցաւ որ մի քառորդ դարու ընթացքում ոչ միայն այդ ուղղութիւնը յառաջադիմութեան պատճառ չը դարձաւ այլ ընդհակառակը ժողովրդին պահեց մի տեսակ անշարժութեան և անտարբերութեան մէջ դէպի ամեն հասարակական կեանք: Եւ այս ը, 24 տարուց յետոյ երբ առաջին անգամ հաստատւում է ընդհանուր հասարակութեան մասնակցելու սկզբունքը, այդ հասարակութիւնը գտնւում է բոլորովին անպատրաստ հասարակական կեանքի, բոլորովին անզատրաստ իւր շահերի գիտակցութեան:

Ո՞ւմն է յանցանքը, եթէ ոչ գործող մարմիններինը, որոնք այդքան տարիների ընթացքում անձնաշնրհում դարձրին իրանց կամ իրանց փոքրաթիւ ընկերութեան համար, բոլոր ազգային պաշտօնները:

1890 թուականին թեմական առաջնորդ Եսայի սրբազանը ժամանելով Թէհրան, և գտնելով իրերն այդպիսի տարօրինակ մի վիճակի մէջ առաջին հիմնաքարը դրաւ ժողովրդի մասնակցութեան իւր ազգային գործերի մէջ: Թողնելով այն ժամանակ գոյութիւն ունեցող 20—30 անդամներից բաղկացած Ուսումնասիրաց ընկերութիւնը, տնից տուն ման եկաւ մի բաժանորդագրութիւն կազմելու ի նպաստ դպրոցի և նոյն Ուսումնասիրաց ընկերութիւնը աւելի ժողովրդական դարձնելու համար: Այս անգամ ընկերութեան մէջ մտաւ աւելի քան 90 հոգի, ընկերութիւնը անուանուեցաւ Ազգային Ուսումնասիրաց ընկերութիւն: Կազմուեց նոր կանոնադրութիւն, որի մէջ և հաստատուեց հոգևոր իշխանութեան վերահսկողութեան իրաւունքը, շատ չափաւոր, շատ ազատամիտ կերպով:

Բայց այդ օրից սկսած, այն գործիչների խումբը որոնք 20 տարուց ի վեր իրանց ձեռքում ունէին ազգային գործերի ղեկը, ամենևին չը համակերպուեցաւ ի-

բերի նոր դրութեան, և բաժանուելով կազմեցին առանձին Ուսումնասիրաց ընկերութիւն, բանալով 1894 յունվարին մի առանձին վարժարան։ Աւելորդ է նկարագրել այն ցաւալի հակառակութիւններն որոնք ծագեցին այդ մի քանի տարիների ընթացքում։ Փառք Աստուծոյ այժմ հասել ենք այն կէտին, երբ պէտք է վերջ դրուի այլևս այդ գժտութիւններին, որոնք, պնդում ենք, հեռանք էին մի այդպիսի յոռի կազմակերպութեան։ Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովը երկրորդ քայլը կատարեց դիմելով Վեհափառ Կաթուղիկոսին և խնդրելով ընդհանուր պարսկահայերի համար մի կանոնադրութիւն, և նախապատրաստելով գաղափարները ժողովրդական նոր կազմակերպութեան համար։ Անցած շաբաթ օր Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովի նախաձեռնութեամբ հրաւիրուեց ընկերութեան ընդհանուր ժողովը որը հաստատեց ժողովրդի մասնակցութեան ըսկզբունքը և ինքն իրան լուծուած համարելով և յանձնելով իւր կառավարած երկսեռ դպրոցները հասարակութեան ձեռքը։

Դեր. հայր Այվազեան արեց երրորդ և վճռական քայլը։ Հիմնուելով բազմաստորագիր մի հանրագրի վերայ որ մատուցուած է նորան, նորին գերապատուութիւնը հրաւիրեց ընդհանուր հասարակութեան ժողով և կիրակի օր ընտրել տուաւ ազգային հոգաբարձութիւն, 12 անդամներից։

Այժմ մնում է նորընտիր հոգաբարձուներին մշակել նոր նախագիծ, ձեռք առնել երկու դպրոցների և եկեղեցիների վարչութիւնը, և թողնելով բոլոր հին վէճերը, դրդուած միայն ազգային շահերի տեսակէտից՝ ստ կոխել այն գեղեցիկ ասպարէզը որ բացուած է նոցա առաջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արմանագրութիւն Ազգային Ուսումնասիրաց ընդհանուր ժողովի, որ կայացաւ Հայկազեան վարժարանում 1894 ամի հոկտեմբերի 8-ին երեկոյեան։

—

Կայացաւ ընդհանուր ժողով ներկայութեամբ քսան և մէկ անդամակիցների։ Պ. ատենապետը ժողովը բացաւ մի առ մի թուելով այն հանգամանքները որոնք ստիպեցին ընկերութեան գործադիր ժողովին բերել ընդհանուր ժողովի առաջ իւր վերջին նիստի մէջ, որ կայացաւ հոկտեմբերի 6-ին 1894 կայացրած վճիռը։

Պ. Ատենապետը հիմնուելով այս հանգամանքի վերայ որ Թէհրանի մէջ չը կայ ոչ մի ազգային վարչութիւն դպրոցական ազգային և եկեղեցական գործերը թուեց այս ցաւալի անկերպարան վիճակը և անվերջ երկպառակութիւնները որոնց տեղի է տուել իրերի այս դրութիւնը։ Նա յիշեց թէ ինչպէս ամէն մի խմբակ կարող է լինում առանց որ և իցէ պատասխանատուութեան կազմել մի ընկերութիւն, խմբագրել մի կանոնադրութիւն իւր համար, բանալ մի ուսումնարան և կառավարել այդ ուսումնարանը բոլորովին ինքնիշխան կերպով առանց պատասխանատուութիւն ունենալու ոչ դէպի հասարակութիւնը որից ուղղակի կերպով կախում չունի և ոչ դէպի որ և իցէ վերահսկող մարմին։ Իրերի այս վիճակը առաջ բերած է այս երկպառակութիւններն որոնց վերայ ողբում է այսօր Թէհրանի հայ հասարակութիւնը։ Եւ այս վիճակին վերջ դնելու համար ընկերութեան գործադիր ժողովը պատիւ է ունեցել իւր Ապրիլ 6 թուականի գրագրեալ գրերսագրով դիմել առ Նորին Վեհափառութիւն ամենայն հայոց Կաթուղիկոսին՝ խնդրելով որ Նորին Օծութիւնը բարեհաճէ կազմել տալ մի կանոնադրութիւն պարսկահայերի համար որի մէջ սահմանուած լինի թեմական առաջնորդի և ժողովրդի փոխադարձ իրաւունքները ազգային հաստատութիւնների, եկեղեցական կալուածների և ամեն ուրիշ ազգային հարցերի մէջ, և նմանապէս սահմանուի ժողովրդի իրաւասութիւնը դպրոցական հարցերի մէջ։

Վեհափառ Կաթուղիկոսը իւր 646 թիւ կոնդակով բարեհաճեց պատասխանել ազգ. Ուսումնասիրաց ընկերութեան այս դիմումին խոստանալով ի մօտոյ խմբագրել տալ մի կանոնադրութիւն պարսկահայոց ազգային հաստատութիւնների մասին։ Արդ՝ որևիցէ մի կանոնադրութիւն պարսկահայերի ազգային հաստատութիւնների մասին հիմնուած լինելով ժողովրդի ընտրողական իրաւունքի վերայ և ոչ թէ այս ինչ կամ այն ինչ մասնաւոր ընկերութեան իրաւասութեան վերայ, ազգային Ուս. ընկ. գործադիր ժողովը իւր առ Վեհափառ Կաթուղիկոսին արած դիմումից յետոյ գալիս է տալ և իւր երկրորդ քայլը առաջարկելով ընդհանուր ժողովին վերացնել Թէհրանի մասնաւոր ընկերութեանց ձեռամբ կառավարուելու դրութիւնը և հետևելով հայ հասարակութեան աշխարհիս ամեն կողմ ունեցած կազմակերպութեան, հաստատել մի ազգային վարչութիւն ձեռամբ ընդհանուր հասարակութեան ներկայացուցիչների և իւր մինչև այսօր կառավարած դպրոցը իւր բոլոր շարժական և անշարժ կալուածներով, ինչպէս իւր իրաւունքներով և պատասխանատուութիւններով յանձնել ազգային ընդհանուր ժողովի կողմից ընտրուած Հոգաբարձութեան։

Այս առաջարկութիւն, մի քանի բառերով երկրորդեցին ընկերութեան մի քանի անդամակիցները, որից յետոյ բոլոր ներկայ եղող անդամակիցների մի առ մի զուգաբարը հարցուելով միաձայն հաստատութեամբ առաջարկը ընդունուեց ընդհանուր ժողովի կողմից, որից յետոյ պ. ատենապետը ազգային Ուսումնասիրաց ընկերութիւնը լուծուած և Հայկազեան երկսեռ վարժարաններն ազգային սեպհականութիւն հրատարակեց։

Որոշուեցաւ ընդհանուր ժողովի այս առաջարկը ներկայացնել Սրբազան նախագահի բարեհաճ նկատողութեանը որպէս եւ գործադիր ժողովի գրաւոր հրաժարականը։

(Ստորագրութիւններ)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆԸ

—

1893—94ին հայ եւ Թուրք վաճառականները գնել եւ արտահանել են Ռուսաստան Մարաղայից, Ուրմիից, Բինաբից, Դուխարդանից 410000 փ. չամիչ իսկ Թուրք վաճառականները 140000 փութ, ընդամենը 550000 միջին Թուով փութը 5 դրամով։

Չամիչը արտահանում են ընդհանրապէս Ռուսաստան արկղիկներով ամեն մի արկղիկում մտնում է 3 փութ եւ կէս կան նաեւ փութանոց արկղիկներ։ Արկղիկները շինելու համար հիւսները գնել են եւ կտրել մօտաւորապէս 183333 բարտի-ծառեր, ամեն մէկին տուել են 10 դրամ. մի արկղը արժէ 16—18 շահի։

Չամիչը մաքրելը, եաշչիկների մէջ լցնելը. նորանց կաշիով պատելը (որ մէջին է կոչւում) եւ Աստարայ տեղափոխելը միջին Թուով, ամեն մի բեռը նստում է 45 դրամ, չորս եաշչիկը մի բեռն հաշուելով Բինաբից. Ուրմիից, Մարաղայից, Դուխարդանից, մինչեւ Աստարայ 550000 փ. չամիչ տեղափոխելու համար հարկաւորուել է 15750 ուղտ 31500 ձի եւ 7000 ալանակ։

Նուշ հայերը գնելն 50000 փութ.

„ Թուրքերը „ 30000ընդամենը 80000փութ։

Սորա հակը բաղկացած է լինում 4 կամ 6 փութից, փութն արժէ 35 դրամ. քրէհը, միջոկների մէջ լցնելը, կաշիով պատելը մինչեւ Աստարայ ծրատում է 70 դրամ։

Բամբակ 13000 փութ՝ հակը 6 փ. փութը արժէ 2 Թուման։

Թուրքերը 9000 փութ, ընդամենը 22000 փութ։

Բրինձ հայերը 100000 հակ, ամեն մի հակը 6 փ. փութն արժէ 5 դրամ։

„ Թուրքերը 70000 հակ, 170000 փութ։

Լովլայ (չոր ծիրան) հայերը 10000 իսկ Թուրքեր 3000 ընդամենն 13000 փ. փութն արժէ 8 դրամ միջին Թուով։

Ղազվինից. Համադանից, Մալայերից, Ասխարատից, արտահանել են մօտաւորապէս 80000 փութ չամիչ։

Ատրպատականի ներկայ հայ վաճառականները տրանք են։

Եղբարք Թումանեանց
Եղբարք եւ Որդիք Միրզայէլեանց
Ընկերութիւն Արամեան
Եղբայրք Ադամանդիլեան
„ Յակոբեան

Եղբայրք Բժշկեանց
Մելիք Սարգսեանց
Ա. Տէր Օհանեանց
Մ. Յովսէփեանց:

Սալմաստում

Բ. Արզումանեանց
Ս. Արզումանեանց
Դ. Հասրաթեանց
Զ. Բուդաղեանց
Բ. Բուդաղեան եւ այլն:

Կան մինչեւ երեսունի չափ. II եւ III կարգի վանահայրեր: Տախտակ կտրելու եւ արկղներ շինելու համար՝ մօտաւորապէս աշխատել են 13750 հիւսն: Զամիչը մարելու եւ արկղների մէջ լցնելու համար՝ աշխատել են մօտաւորապէս 14000 մշակներ:

Մեխ հիւսերն գործ են ածել 1 վերշոկ, 1 եւ կէսանոց եւ 2 վերշոկանոց 859 փութ:

Նամակ Թիֆլիսեանց

Թէհրան 14 Հոկտ. 94

Վերջապէս անցեալ կիրակի Հոկտ. 9-ին տեղի ունեցաւ ազգային այնքան ցանկալի, ընդհանուր ժողովը, որը սկսեց առաւօտեան ժամը 10-ին եւ տեւեց մինչեւ երեկոյեան $4^1/_2$-ը ընդհանրապէս ժողովը լուրջ չէր, կիրակի լինելու պատճառով, երեխաների մի մեծ բազմութիւն էր տեսնւում ժողովում: Նախագահ հայր Այվատեանը բացաւ ժողովը, յայտնելով նոյն օրուայ գումարման նպատակը, այսինքն ազգային գործոց կանոնաւոր կազմակերպութիւն տալու համար մի ազգային վարչութեան ընտրութեան անհրաժեշտ հարկը եւ խնդիրը: Ժողովի կողմից ինքը, նախագահը, ընտրեց առենապետ իշխան Վահրամ պէյ Տատեանին, եւ սկսուեց հոգաբարձութեան ընտրութեան գործը: Առենապետը յայտնեց որ ժողովը պէտք էր նախ երեք հոգի ընտրէր 12 հոգաբարձուների եռապատիկ ցանկը պատրաստելու: Որովհետեւ ժողովուրդը այդ ձեւերի մասին դեռ շատ քիչ գաղափար ունի, ուստի քիչ յապաղեց որի պատճառով ժողովականներից մէկը խնդրեց նախագահ հօրից որ ինքը ընտրէր այդ երեք հոգիներին որ եւ ընտրեց այնպիսի անձնաւորութիւններ, որոնց չեմ կարծում ժողովը համաձայնէր իրան իրաւասուները կարգելու, որի պատճառով եւ ընտրելեաց եռապատիկ ցանկում մուտք դիրծեցին եւ ոչ նպաստաւոր անձնաւորութիւններ: Ինչ եւ է ի լուր հասարակութեան կարդացուեցաւ այդ ցանկը եւ քիւեցաւ քուարկութիւնը: Քուէարկողները 121 հոգի էին իսկ քուէ ստացողները մօտ 50 որոնցից ընտրուեցան հետեւեալ 9 անձինք բացարձակ քուէով՝

Իշխան Վահրամ պէյ Դատեան	114
Միրզա Մարտիրոս-խան	103
Բժիշկ Բաղիլ	83
Մկրտիչ Մկրտումեան	73
Աբրահամ Մելիք-Աբրահամեանց	67
" " "	67
Միրզա Մեսրոպ-խան	62
Յովհաննէս-խան	60
Մօսիս Շառլ	60

Իսկ մի քանի ուրիշներ եւս առաւելագոյն քուէ ստացողներ 40—51 ձայն որոնցից պիտի ընտրուէր երեք եւս ամբողջ ընտրելեաց թիւը ամբողջացնելու համար, բայց ժամանակի ուշ լինելու պատճառով յետաձգուեցաւ զացող կիրակի:

Ընտրութիւնները պէտք է խոստովանուի որ շատ անկանոն էին եւ մինչեւ իսկ անարդար: Ամեն բան կատարուեց ձեւականութեան եւ ոչ սկզբունքի վերայ: Ժողովին ներկայ էին մէկ կամ երկու բողոքականներ, որովհետեւ քուէարկութիւն սկսելուց յառաջ դիւանի կողմից յայտարարուեց թէ ժողովը կարողէ եւ այդ ցանկից դուրս մարդիկ եւս ընտրել ուստի եւ մէկ բողոքականի եւ մէկ կաթոլիկի անունով էլ քուէներ դուրս եկան. նախագահ հայրը ասաց թէ այլադաւանները ձայն չունին այսինքն իրաւունք չունին ոչ քուէ տալու եւ ոչ քուէ ստանալու ազգային գործերում. համաձայն ազգային ինչ ինչ կանոնադրութիւնների այդ ճիշդ է, բայց չը գիտեմ ինչու այդ օրէնքը միայն խեղճ բողոքականների վերաբերմամբ գործ դրուեցաւ եւ ոչ կաթոլիկների համար էլ: մինչ դեռ Մօսիս Շառլի (կաթոլիկ) համար դուրս ելած ամբողջ քուէները ընդունուեցին եւ նա բացարձակ ընտրելիների դասը անցաւ իսկ բողոքականի քուէները դուրս թափուեցան: Մենք հակառակ չենք Մօսիս Շառլի ընտրութեանը, այլ մեր խօսքը սկզբունքի եւ անարդարութեան վերայ է, եթէ սկզբունքով մերժւում է այլադաւանների մուտքը ազգային գործերում ինչու ուրեմն Մօսիս Շառլի անունը նախապէս մտցրուում են ցանկում եւ եթէ կաթոլիկները կարող են ընտրել եւ ընտրուիլ ինչու ուրեմն բողոքականները չը կարողանային, չէ որ ոչ արդարութիւն կայ եւ ոչ սկզբունք գործի մէջ, իսկ եթէ Մօսիս Շառլի ընտրութիւնը անհրաժեշտ էր ինչու ուրեմն այդ խիստ վճիռը ի լուր հասարակութեան արձակուեցաւ: Այ ձեզ կատարեալ ձեւականութիւն:

Երկրորդ, քուէթղթերի կարդալու ժամանակ մի խորթ բան աչքի զարկաւ այն է 10-ական 15-ական քուէթղթեր մի եւ նոյն ձեռքով գրուած լինելը մի եւ նոյն գրութիւն ունենալն, որը նշանակում է թէ ամեն ոք ազատ քուէներ չէ տուել այլ ազդեցութիւններ ի գործ դրուել են քուէները գրելու ժամանակ:

Երրորդ, երկու Աբրահամ Մելիք-Աբրահամեանցների քուէների խնդիրն էր մինը Թումանեանց տան ներկայացուցիչ, միւսը բանկի գանձապահ որոնց անունները մի եւ նոյն լինելով երբեմն քուէները առանց յիշատակութեան էին տրուած եւ մինչեւ վերջը հազիւ թէ տասը այդ տեսակ քուէներ տեսնուեցան, որոյ համար հայր Այվատեանը ասաց թէ այդ անորոշ քուէները, պէտք էր բաժանել երկուսի, բայց վերջում Աբրահամ Մելիք-Աբրահամեանների քուէները բաժանեցին երկուսի, մինչդեռ 134 ձայների մաքսիմումը Թումանեանց տան ներկայացուցիչին էր որոշ գրուած: Նոյ պէս եւ երկու Արշակների քուէների խնդիրը մէկը Մ, Պետրոսեան իսկ միւսը Պատմագրեանց, շատ քուէներ կարդացուեցան որ միայն Արշակ էր գրուած առանց ազգանունի եւ փոխանակ, այդ անորոշ կամ ամբողջ քուէները երկուսի բաժանելու որպէս արին Մելիք-Աբրահամեանցների համար, առանց հարց ու փորձի անորոշ քուէները դուրս թափեցին այնպէս որ երկուսն կամ երկուսից մէկը զրկուեց շատ ձայներից:

Չորրորդ. արդէն յայտնի է որ երկու կուսակցութիւններ, որոնց հակառակութիւնների պատճառով մեծ ջանքեր էին լինում, մէկ միութիւն յառաջ բերելու, սակայն մէկ կողմը որ պաշտպանում էր ինչ որ արդարն էր ինչ որ օրինաւորն էր, սկզբունքն իբրեւ զէնք իւր ձեռքին ունենալով, եւ երբ նրանք հրաժարուեցան սուսկ ազգային գործերը աւելի բարձր պատուանդանի վերայ դընելու փափագանօք, կազմուեցաւ այդ ընդհանուր ժողովը որի ձեռամբ պիտի ընտրուէր ազգային եւ եկեղեցական գործերին վերայհսկող մարմինը—վարչութիւնը, չէ որ նորից այդ վարչութիւը պիտի կազմուէր երկու կուսակցութեանց նոյն ներկայացուցիչներից: Ինչու ուրեմն ընտրելեաց եռապատիկ ցուցակում երկու կողմի ընտրելիների մէջ դէթ հաւասարութիւն չը պահպանուեց: Յայտնի կարելի է տեսնել այդ ցանկում որ 36 հոգիներից մի փոքր մասը երեւակայական ըէֆորմների ետեւից վազողներ են, մի երրորդ մասից աւելին խաւարի երկրպագուներ որոնց դէմ էր արդէն այս քանի տարուայ հակառակութիւնը, դորանց հակառակ կողմից երեք կամ չորս հոգի իսկ մնացած մասը իբրեւ համեմ ներմուծուած: Չէ որ պէտք էր ընտրելիների թիւն հաւասար լինէին երկու կողմից, որ վերջում գործի մէջ կրկին գժտութիւններ չը ծագելու համար հաւասարակշռութիւնը պահպանուէր: Մի ակնարդ ձգենք այդ քացարձակ քուէով ընտրուած ինը հոգիների ցուցակի վերայ կը տեսնենք մէկը հրաժարեցրած կամ լաւ ևս ասած հրա-

ժարուած, կը մնան ութը հոգիներ որոնցից երկուսը չեզոք և մէկը լառաջադիմական կուսակցութեան ներկայացուցիչ հաշուելով կը մնան հինգը, և 12 թիւը լրացնելու համար ևթէ ութը առաւելագոյն քուէ ստացողներից չորս հոգիներ ևս ընտրուին Հաւատի ենք, որ երկու կուսակցութեան ներկայացուցիչների վերայ կուելանան երկու-երկու հոգի մէկ կողմից կը լինին երեք միւս կողմից եօթը (?) և սորանք այն խմբից—կուսակցութիւնից են որոնց համար դժբախտաբար գերապատիւ Նախագահը հասարակութեան առաջ, ևթէ չեմ սխալւում, արտասուելի աչօք Աստծուց շնորհք և իմաստութիւն էր խնդրում, չը գիտեմ, Նրանց ինչ ինչ տեսակ վարմունքների համար։

Հինգերորդ, իշխան Վահրամ պէյ Տատեանի ընտրուիլը և երկրորդ օրը Նրանից հրաժարական պահանջելը և ընտանալը։ Տրուած քուէներից պարզ յայտնի է որ իշխանի անունը ցանկում լինելով ժողովը միաձայն հաւանութեամբ ընտրեց Նորան իսկ ևթէ Նորա ընտրութիւնը մի քանի հոգիների ջղերին դիպչելու էր, այսինքն Նրանց, որոնք Նորա աչքի առաջ չէին կարող ուղղակի զեղծումներ գործել, ինչու ցանկի մէջ դրին Նրանց նեանունն էլ։ Ժողովը տեսնելով Նրան իբրև մէկ բանիմաց և լուսաւորեալ մարդ և վստահ Նորա անձնաւորութեան վերայ իւր միակ ընտրելին յայտարարեց։ Նորա առաջ կը խորտակուէր արդէն ամբողջ խաւարասէր խումբը և իրաւ ևթէ Նորան ընտրելի չը ներկայացնէին գուցէ ժողովի ամբողջ ուշադրութիւնը կը դառնար մի այլ կետի վերայ։ Երևի իշխանին ընտրելի ներկայացնելը մի պատրուակ էր զանազան նպատակների հասնելու համար։

Այս ամենից երևում է որ այս մի քանի շաբաթուայ մէջ եղածները բոլորն էլ սարքուած բաներեն եղել մի քանի անձնաւորութեանց մէջ և թէ վարագոյրի տակ դեռ շատ բաներ կան ծածկուած որոնց գաղտնիքը գուշակելը շատ էլ դժուար չէ, օրինակ գերապատիւ Այվատեան հոր գումարած մասնաւոր և ընդհանուր ժողովները, մի հանրագրի ծրագիր տալը և բազմատարազիր դարձնելը, Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովին հրաժարեցնելը և նոյն իսկ ընկերութիւն լուծելտալը և այլն և այլն։ Երևի ուզում են մի նոր աշխարհ ստեղծել իրանց ապագայ ձգտումների համար և ազգայինի անունով մի քանի տարիներ էլ ժողովրդին մի այլ ձևով կաշկանդել և գերի դարձնել։ Մենք չուզելով կանխել գաղտնիքը բացատրելու կը թողնենք այդ ժամանակին որ ինքն պատռէ քողը և ամեն բան բացատրէ, բանալ հասարակութեանը աչքի առաջ։

Միքայէլ Յ. Եղիազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հոստատ աղբիւրներից լսում ենք, որ Մարաղայում մի հայ երիտասարդ իւր մօտիկ ազգական մի օրիորդի հետ ամուսնացել է պարսիկ հոգևորականի բռնութիւնով մի բանի տարիների մէջնորդութեամբ, որովհետև հայ քահանան չէ ուզեցել պսակել չհաւանեան պատճառով, փախենալով իրանից բարձր իշխանութիւնից։

—

Սալմաստից սկսած մինչև Մակու, սահմանին մօտիկ գտնուած գիւղերը քանի գնում է դատարկւում են քուրդ հրոսակների աւարառութիւնների պատճառով։ Այդ քուրդերը այս օրերս անցնելով սահմանը Թալանել են Թադէոս առաքելի վանքը, և վանքապատկան գիւղը, որի վանահայրը, ինչպէս լսում ենք, հեռագրել է Էջմիածին, իսկ այնտեղից էլ հեռագրուած է մեր ս. առաջնորդին, որ դիմէ ուր որ հարկն է։

—

Դավրէժից մեզ գրում են հետեւեալ նկատողութիւնը „Սէր"ընկերութեան դրամ խնայանոցի յայտարարութիւնը մի քանի անգամ կարդացինք պատուական լրագրումդ, որը ուրախացրեց մեզ, բայց, ինչպէս երեւում է այս էլ մեռաւ գեռ չծնուած՝ վարչութեան ուրիշ շատ երաշխների երեւակայութիւնների հետ միասին։

—

Սկզ. 29-ին Բերդաքաղի ուսումնարանների հոգաբարձութիւնը միացել է Լիլավայի ուսումնարանների հոգաբարձութեան հետ Լիլավայի ուսումնարանների վիճակախաղում։ Այնպէս որ Բերդաքաղի հոգաբարձութիւնը չը բաւականանալով ուսաց եւ պարսից կառավարութիւնից ստացածներովը, այսօր, առանց խղճահարուելու, պիտի սեփականացնէ Լիլավայի ուսումնարանների միակ աղբիւր վիճակախաղի օգուտի կէսը։ Երկու Քաղերի հոգաբարձութիւնը որոշել է չորս հազար Քուման դնել վիճակախաղի։

—

«Daily News» լրագիրը Ռէյտերի գործակալութիւնից մի հեռագիր է հրատարակել Թիֆլիսեան հայր Հմայեակը (Պատր. տեղապահը) ինչ ինչ պատճառներով իւր հրաժարականն տուել է։

—

Տեղւոյս Ա. հոգաբարձութեան պոկոս մնացած անդամների ընտրութիւնը կատարւում է տպագրուածնամակներով։ Որի մէջ կայ առաւելագոյն քուէ ունեցող 8 հոգիներից մի ցանկ, որից պիտի ընտրէ հասարակութիւնը 4-ը միայն։

—

Դավրէժից շարունակ մեզ հաղորդուած լուրերից երեւում է, որ Ատրպատականի Սարդարն առաջնորդը, երեսի վերայ Թողնելով ազգային ամեն գործեր, խիստ զբաղուած է կուսակցական խնդիրներով։

—

Բովանդակութեան մէջ „Թէհրանայ հասարակութեան ընդհանուր ժողովը" լինելով մրմիայն կրկնութիւն այս Քուի առաջին եւ երկրորդ երեսի մէջ արտայայտուած մտքերի, հրատարակութիւնն աւելորդ համարեցինք եւ փոխարէնը մտցրինք «Պարսկաստանի բերքերի արտածութիւնը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լոնդոն 30 սեպտ. Փէ՛ռբրիչի գուբսը երեկ գիշեր պատերազմական Նախարարութեան շրջանում ամբողջ մի քանի ժամեր, արևելեան երկիրների հետ հեռագրով քանակցութեամբ էր զբաղուած։ Շատ կարելի է որ այդ հեռագրական խնդիրները վերաբերում լինին Չինական և Ժապոնական պատերազմին և գուցէ Անգլիոյ տէրութիւնը ձեռնարկել է միջոցներ ձեռք առնել չինական նաւահանգստներում ունեցած հպատակները ապահովութեան մէջ դնելու։ Յատկապէս Հոնկ-Քոնկում անգլիական զօրքի թիւը աւելացնելու են։

Բաթավիա 30 սեպտ. Հոլանդական զօրքը Վ. Էթէր զօրավարի հրամանատարութեան ներքոյ տիրել է Մոթրամ քաղաքին, հոլանդական զօրքից սպանուել են եօթը հոգի և վիրաւորուել 49 հոգի բայց կղզու բնակիչներից շատ են ջարդուել։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսաստանի երիտասարդաց նորակազմ խրախնայողական ընկերութիւնը, պատիւ ունի յայտարարել Ռուսաստանի Հայ Հասարակութեան որ բացուած է ներկայ 1894 թիւ 20 Սեպտեմբերի.

Խնայողները կարող են տալ մէկ զրանից սկսած մինչև որքան իրանց կամքն է։ Գանձը պահւում է բարերարք Արամեանց կանտորում, պիտի դիմել պ. Ստեփանոս Սիմէօնեանցին։

Նախագահ՝ Գասպար Սարվարեանց
Համարկալ՝ Ներսէս Ներսիսեանց.
Գրագրաղար՝ Գալուստ Յովհաննիսեանց.

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ ՀԱՅ

ԼՐԱԳՐՈՂՔԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՔԵՑ

Ծախւում են խմբագրութեանս մէջ։

Գինն է Թէհրանում վեց զրան իսկ Պարսկաստանի օտար քաղաքների համար 8 զրան։